

յիշատակէ Տալայասանք, որոնք կը կարծուին երբայեցինքերէն սերած, Յովհաննէս Թիւթիւնճիի Թեւմանոսներուն պէս: Ուրեմն՝ այս տեսակ աւանդութիւն մը գոյութիւն ունէր Հապէշներու մէջ: Ազոնց կը յիշէ ուրիշ ցեղեր ալ, բայց կ'անգիտանայ Հայերէ սերած ցեղի մը գոյութիւնը:

Թիւթիւնճի կը հաստատէ Հապէշիստանի մէջ հրեայ հին գաղութի մը գոյութիւնը, ինչպէս նաև Թուրքերու, որոնք վերջէն եկած են (118-120): Հըրեաներու գոյութիւնը շատերէ հաստատուած է, սակայն Թուրքերը բնաւ յիշուած չեն տարբեր հեղինակներէ: Հաւանօրէն հոս մահմետական ըսելու տեղ Թուրք ըսուած է, ինչպէս սովորաբար ռամիկները կ'ընեն մահմետական եղողի մը «թրքացաւ» ըսելով:

Ասով կրնայ մեկնուիլ նաև Սէննարի վեհապետին Թիւթիւնճիի կողմէ արուած «Թագաւոր արաբաց» տիպոգրքը (183) և «կոչի Թուրք» բացատրութիւնը, որ արգիւնքն է սա իրողութեան, թէ այդ երկիրը կը գտնուէր օսմանեան գերիշխանութեան տակ, սակայն իր բնակիչները արաբ էին և մահմետական, բայց չէին կառավարուեր թրքական օրէնքներով (182-183):

Անհաւանական չէ, որ արաբական ծագումով ցեղեր գոյութիւն ունեցած ըլլան Հապէշներու մէջ:

Յովհաննէս Թիւթիւնճի հապէշ ժողովուրդի կեանքին վրայ ալ կու տայ տեղեկութիւններ, կը հաստատէ Հապէշներու շատ նախնական ժողովուրդ մը ըլլալը: Ամէնքն ալ մերկ ու բոպիկ էին (130-133), կ'ըսէ, բացի աւազանիի անգամներէն, որոնք գէթ լաթով մը կը ծածկուէին (132):

Հապէշները Ֆիզիքապէս չափազանց դիւրա-